

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Գ Ի Ր

ԹԻԻ 340.

ՀԻՆԴՇԱՐԹԻ

1869 ԱՊՐԻԼ 24

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պոլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 զրշ, դարձեալ 400 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման առջը 40 փարայ է մէկ անդամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից հոր Գրատունը :

### Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

#### Զ Է Յ Թ Ո Ւ Ն

կլեմք թէ՛ Զէյթունի ազգայիններէն ամենք Մարաշի լճեր, և բողք մատուցեր են տեղական կառավարութեան՝ ընդդէմ Զէյթունի դայմագամ խայրուլլահ էֆէնտիին, որ Զէյթունցւոց անդորրութեան և յառաջողիմութեան հակառակ կ'ըլարուի եղեր :

Յայտնի է որ Զէյթունի մէջ ժամանակէ մ'ի վեր ուսումնարան մը և որս նախակրթարան հաստատուած են, շնորհիւ աւստաճեռնութեան կարապետեան մեծապատիւ Պօղոս էֆէնտիի, որ Գահիրէ կրնակի : Այս հաստատութիւնները հիմա բուսական արդիւնաւոր վիճակի մէջ կ'դառնան :

Գայմաղամն՝ ասոնց յառաջդիմութեան համար՝ ըստ բարձրագոյն կամաց մեր օգոստ. Սուլթանին՝ պէտք եղած օգնութիւնը չընելէն զատ, ասոնց խանդարման պատճառ եզողնելը անպատիւ կ'ընողու, և այսպէս ուրիշներու ալ մեր ազգայնոց դէմ յարձակման տեղի կուտայ եղեր անուղղակի կերպիւ :

Տարտրդ ամսոյն 7ին հինգ շաբթի

դիշեր, Մարաշի տաճիկներէն չալուշ էմինի որդի գրադիր Հիւսէյին էֆէնտին՝ հետը չորս սատիկան՝ վարժատանց մէկը կ'օխելով, պառկողներէն մէկ քանին բռներ բանտարկել աուեր է. և առաւօտուն գինովութենէն ըսթափելով թող տուեր է :

Այս դէպքին վրայ, մէկ քանի օր անցնելէն յետոյ, վարժապետ մը պարտիզն եկած ատենը աւջիւր ոտտիկան մ'ընելով ծեծեր է զանի :

Ոտտիկաններէն մէկը Զէյթունի դիմացը ի հնուց տնկուած մէկ խաչ կտրելով ծոցը դրեր է : Երբ խնացուցեր են գայմաղամին, կտորներն ծօցէն ելեր են, բայց նա դարձեալ անպատիւ արձակեր է զանի :

Յիշեալ գայմաղամն ամեն օր գինով կ'ըլարուի եղեր :

Կրտսի թէ, այս գայմաղամն եթէ այսպէս շարունակէ, վարժարանները պիտի գոցուին և մեր ազգայինք աւելի թշուառ վիճակի մէջ պիտի իյնան :

Մեր ընդունած այս տեղեկութիւնները, Պատրիարքարան ալ գրուած են եղեր : Հայէպի ընդհանուր կառավարին ալ Զէյթունցւոց բողք.

ներուն լսելով, պէտք եղած տնօրինութիւնն ընել չվտար եղեր :

Չեմք ուզեր հաւատ ընծայել տեղական կառավարութեան դէմ եղած այս ամբաստանութեան, բայց միանգամայն պարտ կհամարինք մեզ՝ ազգային Պատրիարքարանի և մասնաւորապէս կայսերական բարեխնամ կառավարութեան ու շաղթութիւնը խնդրել Ձէյթունի վրայ, որ բողոք կբանայ զինքը կառավարելու զրկուած գայմագամին հակառակ իւր պարտաւորութեանց վարուելուն դէմ :

Նոր հինի հին րէի հի

Կրնա՞յ ըլլալ որ նոր դինին հին տիկի մէջ լլուի, կամ՝ նոր կապերսը հին կապերտի վրայ գրուի ( եամա ), և կամ՝ ընդհակառակն հինը նորին վրայ : Ս. Աւետարանին մէջ կկարդամք թէ այսպէս ընողը հինին հետնորն ալ կորուսած կըլլայ :

Մեր ազգային բաղձանաց համար կրնանք այսպէս ըսել : Նորը հինին մէջ սկսած է կորսուիլ, կամ թէ՛ հինը նորին արժէքը պղտիկցնել սկսած է :

Մեր նպատակը շատ բաց խօսիլ չըլլալով, թող ներքէն ազնիւ ընթերցողք, խօսքին կարգէն կրնան հասկընալ մեր ըսածն ու ըսելիքները :

Հրեաները աշխարհին սկիզբէն ի մեր Մեծիայի դպրուն կապանն : Սրմը թեղիս անոնց Մեծիանդայ, բայց մեր սպասածը տեսնելու համար այսչափ հաւանականութիւն մ'ալ չերեւիր :

Մեր սպասածը հեռուն չէ, մօտն ալ չէ. հոս է, հոն է, խմքովն է, քու

քովը է, անոր քովն է, ուրիշին ձեռքըն է. դըրոյց է ի դըրոյց կիծախառի :

Սմբողջ երեք տարին լրացաւ, մտանք շորրոզը, և տակաւին կակընկալենք տեսնել մեր սպասածը, մեր Մեծիայն :

Ո՞ր է սահմանադրութիւնը : Սպանիա գեռ տարի մը չընէր, կառավարութեան մը ահագին ձևը տապալեց, թագուհի մը թագազուրկ ըրաւ, ընկճուած ժողովրդի մը ալաւտութիւն տուաւ, ամէն ընդդիմադիր մրցումներու առջին առաւ. մեկ կողմէն ժողովուրդը յուզող ձեռքերը բռնեց, միւս կողմէն ժողովրդեան ձեռքէն քուէ առաւ, ազգային ժողովներ կազմեց, ազգային սահմանադրութիւնը խմբագրեց վերջացոյց 7—8 ամսոց միջոյի մէջ :

Իսկ մենք, ի՞նչ մեծ ազդ եմք եղեր, ի՞նչ մեծ կառավարութիւն ունինք եղեր, որ տակաւին վերաքրննեալ սահմանադրութեան խմբագրութիւնն անգամ չկրցանք աւարտել :

Միրելի ընթերցող, ի սկզբան ըսինք որ շատ բաց չպիտի խօսնք. դու մեր այսչափէն հասկցիր ըսելիքնիս : Կենդանութիւն ուզող ազգ մը 7—8 ամսոց մէջ լմնցուց իր դորձը :

Երեք օր շարունակ անօթի մնացող անձ մը սեղան նստած ատենը, ալ սեղանին արտաքին երևոյթներուն կամ պակասութիւններուն չնայիր, այլ իրեն կեանք ստուղ հացն ու կերակուրը :

Ո՞ր է մեր կենդանութիւնը, ո՞ր է մեր հայր, ի՞նչ զարմանալի բան է ժամանակուոր վարչութեանց ատեն երբ սահմանադրապէս երկու տարի պաշտօն պիտի կատարէին, հայր

կրցան ետևէ ետև վեցական ամիս պաշտօն վարել : Հիմա առժամանակեայ անունին ներքև չորս տարի է վարութիւն մը կայ : Սահմանադրապէս ընտրեալ ժողովականները , հետընտէ գեղ ընտրութեան սուփէն դուրս չելած՝ կհրաժարէին : Հիմա հրաժարեալները պիտի տեսնենք պատրաստ իրենց հրաժարականը ետ առնելու , և ազգին դործերուն հըս կելու սրտի մտօք , ոտքով ու գլխով :

Այս ի՞նչ ազգասիրութիւն է . այս ի՞նչ անձնուիրութիւն է :

Հարկաւ գազանիք մը կայ . . . Աստուծոյ մատը ըլլալու է այս դործիս մէջ . Աստուած այս վեհանձն սիրտերուն թեւադիր եղած ըլլալու է որ խցման ազգին միայ և դան յանձնառնին իրենց փափուկ պաշտօնը , որ ազգին չուզած պատրիարքի մը հրաժարականին և ազգին ուզած տեղապահի մը ներկայութեան հետևութիւնն եղած էր :

Ցախուին մտայած չենք յունվար ամսին մէջ պատահածները : Ազգը չուզեց Պօղոս եպիսկոպոսը պատրիարք տեսնել , եկեղեցական դասն ալ Արիստակէս սրբազանի առաջնորդութեամբ . յարգեց ազգին այս կամքը , ազգին խնդիրը բելի եղաւ բարեխնամ կրտավարութեան քով . Պօղոս եպիսկոպոսը ինկաւ իշխանութեան , և Արիստակէս արքեպիսկոպոսը Տեղապահ ընտրուեցաւ : Իրաւ է որ Տեղապահին ընտրութիւնը ազգէն չեղաւ , ըսել կուզեմք՝ խառն ժողովոյ մէջ ընտրուեցաւ . բայց ընտրեալն ազգին սիրած անձն ըլլալով ընդհանուրին ընդունելի եղաւ : Բնական բան մ'էր որ խառն ժողովոյ մէջ այս

ընտրութիւնը եղած միջոցին , այն ժողովականները՝ որ համամիտ չէին և չընդունեցան այս փոփոխութիւնը , պիտի հրաժարէին , և հրաժարեցան ալ : Ազգն ալ գոհութեամբ տեսաւ անոնց հրաժարականը , բայց այժմ ի՞նչ պատճառ կայ կրկին պաշտօնի կոչել այն հրաժարեալները :

Պօղոս եպիսկոպոսը կրկին պատրիարքացունէ՞ : Սակայն Արիստակէս սրբազանը ժողովրդեան կողմէն ընդունուած ըլլալուն հաւանութեան կնիքն ալ կկրէ . այն է՝ Ս . Պատարապի մէջ Նորին սրբազնութեան անունն յիշատակութիւնը վասն զի ինչպէս ժողովուրդը բողոքեց Պօղոս եպիսկոպոսի համար , ընդհակառակն՝ Արիստակէս սրբազանին համար ալ իր հաւանութիւնը տուաւ . ըսել է որ պատրիարքական աթոռոյ վրայ եղած ամեն փոփոխութիւն ժողովրդեան հաւանութեանը պիտի ներկայանայ : Բարեմն այս մասին կասկածի տեղի մը չունինք :

Այս պայտէս ըլլալուն ապացոյց ալ ունինք ձեռու ընիս : Ամեն . Տեղապահ սրբազանը անկէց ամիս մը յառաջ հրաժարականը տուաւ , չէ թէ բանիւ այլ դրով ու կնքով . սակայն խառն ժողովը չընդունեց անոր հրաժարականը , և չէր ալ կրնար ընդունիլ , ըստ որում՝ ո՞չ ապաքէն ժողովրդեան հաւանութեան պիտի ներկայանար նոր ընտրելին . և կարելի բան էր որ ժողովուրդը թող տար Արիստակէս սրբազանը , ( թէև Նորին սրբազնութիւնը ծերութիւնը և հիւանդութիւնն ալ պատճառ ունենար ) որ հրաժարէր : Հարկաւ չէր կրնար թողուլ , վասն զի Արիստակէս սրբազանը

ժողովրդատեր, ուսումնասեր և բորժանեալ է. այսինքն՝ գործել սիրող. եթէ Բ. Դուռն երթալ հարկ ըլլայ՝ հոն երթալ. եթէ պաշտօնէից ապարանքը հոն, և այլն: Ինչ հարկ կար այս մասերուն վրայ երկարել, եթէ գիտնալինք որ սահմանադրութիւնը վազը պիտի դայ: Մեր բարեկամներէն ուսմանք անցեալ օր կվիճէին թէ երկու տարիէն հազիւ կուգայ. սմանք ալ կպնդէին թէ բնաւ չպիտի դայ: Մենք այս մասին խօսելիք ունիմք բայց որիչ ատեն. մենք սցսօրուան վիճակին վրայ կվախաքիմք դիտողութիւն բնել: Ազգային խօսակցութեան նիւթ իրաւ է որ շատ կայ, բայց ամենէն աւելի ու չազբութեան արժանի է Պատրիարքարանի վիճակը, վասն զի ամեն բան անկէ պիտի բղխի. ամեն ցաւ անոր միջոցաւ պիտի վարատի. Եւրոպէի սահմանադրութեան ալ անոր իմաստը պիտի սրայցուի, վասն զի ազգին ու Բ. Դրան մէջ միջնորդն ան է: Կհասկնան, ու շիմ ընթերցող, քեզի ուրիշ զարմանալի բան մը պատմում: Արդի խառն ժողովոյ և Տեղապահ սրբազանին մէջ կարծեաց փոքրիկ անհամաձայնութիւն մը կայ, կըսեն: Ժողովը, կամ աւելի շխտակն բնելով ժողովականներէն ուսմանք դիտողութիւն կըսեն և զեր Տեղապահ սրբազանին բռնած ընթացքին վրայ, որ արդէն լուծուած կամ չլուծուած խնդրոց մէջ անօրինութիւններ կընէ եղեր: Ասիկա օրինաց դէմ է եղեր. բայց որ օրէնքին չեմք դիտեր: Տեղապահ սրբազանն ալ կըսէ եղեր թէ « Ազգին գործերը չեն կարգադրուիլ շարաթը օր մը մէկ քանի ժամ ժողովուելով. այլ շարաթը 2—3 ամբողջ օրեր պէտք են որ գործերը անօրինուին. կամ պէտք եղած ժամանակը գտնուեցէք, և կամ հրաժարականաւ աւելք ու ուրիշ մը դըրէք »:

Շխտակն բնելով՝ եթէ ստոյգ է այս

տարածայնութիւնը, մէք Տեղապահ սրբազանին իրաւունք կուտանք, որովհետեւ ամեն ցաւ ունեցողը անոր կղիմէ. Տեղապահ սրբազանին ինքնագլուխ կատարութեանը չենք հաւանիր սա պայմանաւ որ ինք պէտք է որ ժողովը պատրաստ չգտնուած ատեն ստիպողական գործերու մէջ անօրինութիւն մընէ նէ, պատասխանատու մնայ: Բայց որով պատասխանատու պիտի մնայ. միայն ժողովին թէ՛ միայն ազգին, թէ՛ երկուքին ալ միանգամայն: Այս հարցումն անոր համար կըսենք որ ժողովը ուղղակի ազգէն ընտրութիւն չանի. եթէ այն պէս ըլլար՝ ազգին երեւակիտանն և դամ կըլլար, և Տեղապահը անմիջապէս ժողովին և հետեւաբար ազգին պատասխանատու կմնար: Այս պարագայիս մէջ մեր համոզումն այս է որ Տեղապահ սրբազանը թէ՛ խառն ժողովին և թէ՛ ազգին պատասխանատու է. և թէ պատահի՞ որ այս երկուքին պատասխանատուութիւնը իրարու չը համաձայնի, բնականաբար առ ազգն ունեցած պատասխանատուութիւնն աւելի մեծ պիտի բռնէ, ըստ որում՝ Նորին սրբազանութիւնը ոչ ժոյն խառն ժողովն ընտրուած է, այլ ընդհանուր ազգին հաւանութեան կնիք կրէ, ինչպէս վերն բախնք. նոյնպէս չէթէ խառն ժողովոյ համար ընտրուած Տեղապահ է, այլ ազգին համար:

Ասանկ պարագայի մէջ խառն ժողովին ալ եթէ ազգային հասարակաց դատաստանին առջև ինքզինքը արդարացունելու միջոց մը կայ, այն է բանալ իր գիւանատունը ազգային ըրազբաց, և ամեն անօրինութիւններն ու գործերն իրոյս հանել:

Ասիկայն սիրելի ընթերցող, միշտ լաւագոյն ճամբան Երբեքն հին րիկէն չլեցնելն է:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՂ  
 Ը. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ  
 ԵՍՍ ԳՐԻՆԹԵՆ Գ. Յ. ԳՐԻՆԹԵՆ